ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2021 թվականի մարտի 2-ի, ժամը 13:00-ի նիստի
N 8 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2020 թվականի գործունեության հաշվետվության մասին հարցը:

Զեկուցող՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Դ.Ն.Հախվերդյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2020 թվականի գործունեության հաշվետվությունը (կցվում է):

2. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2020 թվականի գործունեության հաշվետվությունը գնահատել բավարար:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն (կողմ՝ 53, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2021 թ. մարտի 2
Երևան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

2020 թվականի հունվարին հրապարակվել է Փենսիլվանիայի համալսարանի Աշխարհի ուղեղային կենտրոնների գլոբալ վարկանիշավորման զեկույց 2020 (Go To Think Tank Index Report 2020), համաձայն որի՝ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) Կենտրոնական Ասիայի առաջատար ուղեղային կենտրոնների շարքում նախորդ տարվա համեմատ բարելավել է իր դիրքերը ինը հորիզոնականով՝ զբաղեցնելով 50-րդ տեղը, իսկ աշխարհի 100 լավագույն համալսարանական ուղեղային կենտրոնների շարքում, ինչպես նախորդ տարի, զբաղեցրել է 94-րդ հորիզոնականը:

1. Իրականացվել են 14 թեմաներով (13-ի ժամկետն ավարտվել է 2020 թվականի դեկտեմբերին) դրամաշնորհային հետազոտական ծրագրեր, որոնցից 3-ը՝ բացառապես բակալավրիատի ուսանողներից, մագիստրանտներից և ասպիրանտներից բաղկացած հետազոտական խմբերի միջոցով:
2. Կենտրոնը «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի կողմից անցկացվող Տնտեսության և հասարակության զարգացման խնդիրների վերաբերյալ ապրիլյան միջազգային 21-րդ գիտաժողովի շրջանակներում մասնակցել է «ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացների գնահատում առևտրի ոլորտում» միջազգային զեկույցի պատրաստմանը:
3. Կենտրոնը որպես համակատարող ընդգրկվել է «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի կողմից համակարգվող ԵՏՀ «Եվրասիական տնտեսական միության զարգացման հեռանկարների և ռիսկերի վերլուծություն գլոբալ շուկայում առևտրային

պատերազմների, ֆինանսական պատժամիջոցների և հովանավորչության աճի պայմաններում» թեմայով գիտահետազոտական աշխատանքներում:

4. Հրապարակվել է «ՀՀ Տավուշի և Լոռվա մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելը» հետազոտության արդյունքները ներառող հաշվետվությունը:
5. Հրապարակվել է «ՀՀ Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելի մշակում» հետազոտության արդյունքները ներառող հաշվետվությունը:
6. 2020 թվականին լույս է տեսել կենտրոնի «Ամբերդ» տեղեկագիր գիտահանրամատչելի հանդեսի վեց թողարկում:
7. Կենտրոնում հետազոտական փորձառություն են անցել ՀՊՏՀ մագիստրատուրայի 142, ասպիրանտուրայի 19 ուսանող, օտարերկրյա բուհի 1 ուսանող:
8. Կենտրոնի կողմից նախաձեռնվել և ընթացքի մեջ են (ավարտը նախատեսվում է մինչև 2021 թվականի առաջին կեսին) տվյալների եռալեզու շտեմարանի էլեկտրոնային հարթակի ստեղծման աշխատանքները:
9. Կենտրոնում փորձաքննության են ենթարկվել և համապատասխան առաջարկությունների փաթեթներ են մշակվել հետևյալ իրավական ակտերի վերաբերյալ.
   - ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն,
   - ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
   - «Անձեռնմխելի կապիտալով հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
   - ««Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
   - ««Բարեգործության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,

- ««Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծ,
- «Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 9-ի N 731, 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 և 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1106-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

10. Կենտրոնը դարձել է Վիշեգրադյան միջազգային հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Վիշեգրադյան քառյակի փորձի յուրացումը գիտելիքի և տեխնոլոգիաների փոխադրման բնագավառում» միջազգային ծրագրի համակարգող:
11. Կենտրոնի «Ամբերդ» տեղեկագիրը ներառվել է Cyberleninka էլեկտրոնային գիտական գրադարանում:
12. ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի անձնակազմի կողմից նշված ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ, հրապարկվել է 3 մենագրություն, 1 միջազգային զեկույց (համահեղինակությամբ), տպագրվել է 39 հոդված «Ամբերդ» տեղեկագրում, 24 գիտական հոդված, որից 11-ը՝ արտերկրում, 5-ը՝ ազդեցության գործակից ունեցող ամսագրերում: Կենտրոնի հետազոտողների և փորձագետների կողմից պատրաստվել և հրապարակվել

են 17 վերլուծական ակնարկներ ՀՀ տնտեսության և հանրային կյանքի առանցքային խնդիրների առնչությամբ:

13. Կենտրոնի աշխատակիցները և փորձագետները ԶԼՄ-ներին տվել են 24 հարցազրույց Հայաստանի տնտեսության զարգացման վերաբերող ամենատարբեր թեմաներով:
14. Կենտրոնի աշխատակիցները մասնակցել են Հայաստանի Հանրապետությունում կազմակերպված 4 գիտաժողովի, 5 միջազգային գիտաժողովի, 4 միջազգային համաժողովի, 1 միջազգային վեբինարի, 1 միջազգային քննարկման:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2021 թ. մարտի 2

Երևան